

ԿՐԻՒՆ ԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԻ ԻՒ ԱՐՁԱՆԱԿՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պրոֆ. Կ. Դ. ՂԱՆՍԻՐՔՅԱՆ

Գոցենտ Պ. Մուրադյանն իր մի հոգվածում¹, ուղղված հարտարտակա Գ. Շախկյանի՝ Օձունի տաճարի հնագույն, բայց աղճատված արձանագրության վերծանության դեմ, սխալ էր համարել Ավանի տաճարի մի փակագրի մեր ԳԱԻԲԿ (Գորկ. Գեորգ) վերծանությունը և այդ փակագիրը կարդացել էր սառկալով, բայց քանի որ սարկավազ հոգևոր աստիճանն առանց անձնանունի անիմաստ կլիներ, այդ պատճառով փակագրին միացրել էր մի այլ քարի վրա գրված ՅՈՂԱՆ անունը և ստացել Յոհանն սառկալով: Այդպիսով սարկավազն ստացել էր իր անձնանունը, իսկ Յոհանն էլ՝ իր եկեղեցական աստիճանը:

Սակայն հիշյալ փակագիրը սառկալով կարգալու համար և սկզբնաղբիւր բացակայում է, առանց որի սառկալով չի լինի: Այդ նկատի ունենալով՝ մենք մի նամակ գրեցինք «Պատմա-բանասիրական հանդես» խմբագրությանը, նշելով, որ ՅՈՂԱՆ անունը և փակագիրը միեւնոյն արձանագրության մասերը չեն, այլ տարբեր, յուրաքանչյուրը մեկ բառ պարունակող ինքնուրույն հիշատակագրություններ են և տարբեր մարդկանց անձնանուններ²: Նամակում նշել էինք նաև, որ փակագրի մեջ երևացող դրերից մեկը երեք անգամ և կարդալուց հետո չի կարելի նույն գիրը շորտրոգ անդամ և կարդալ:

Այժմ Պ. Մուրադյանը հանդես է եկել մի նոր հոգվածով, որի մեջ դարձյալ պնդում է իր սխալ տեսակետը՝ միշտ փակագիրը կապելով ՅՈՂԱՆ անվան հետ: Երբեմն էլ այդ սխալը վերագրում է նաև մեզ, իբրև թե մենք էլ փակագիրը կապում ենք ՅՈՂԱՆԻ անվան հետ, միայն այն տարբերությամբ, որ ինքը կարդում է ՅՈՂԱՆ ՍԱՐԿԱՅԻԿԻ, իսկ մենք՝ ՅՈՂԱՆ ԳԱԻԲԿ: Սակայն այդպիսով չսահմանափակվելով, նա ՅՈՂԱՆԻՆ հայտարարել է Ավանի տաճարը կառուցող ճարտարապետ, այն էլ ոչ թե ենթադրաբար, այլ՝ շատ որոշակի կերպով: Մեղադրելով մեզ, որ Ավանի տաճարի ճարտարապետին Գառլ էնք դարձրել, իր հոգվածում գրում է. «Բայց առավել ցավալի է, որ նա (այսինքն մենք—Կ. Ղ.) չի խնայում Ավանի տաճարը կառուցած շնորհաշատ ճարտարապետին, հարկադրելով նրա անունը կարգալ անդամահատությունը ՅՈՂԱՆ Գառլ և ոչ ՅՈՂԱՆ ՍԱՐԿԱՅԻԿԻ, ինչպես նա իրեն կոչել է³: Է՛բրեն արդեն առաջինք, նու-

¹ Տե՛ս ՀՈՍԷ ԳԱ ՈՒՐԱՐԵՐՈՒ (հատ. գիտ.), 1973, N 5, էջ 89—82:

² Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1973, N 4, էջ 230:

³ «Պատմա-բանասիրական հանդես», 1974, N 2, էջ 237: Պ. Մուրադյանն Ավանի փակագրի մեր վերծանության անհեթեթությունն անկերն դարձնելու դիտավորությամբ ամենուրեք ներկայացնում է ԳԱԻԲԿ ձևով, անգամ իր հոգվածի վերնագրում: Մենք դեռևս 1975 թ. դրել ենք, որ Գառլ-ը պետք է կարդալ Սառլ, որ Գեորգ անձնանվան շատ ապրածված քարատաշին ձև է: Երևան ինչպես սառ-ը կարդում ենք օտ. արիմակը՝ օրինակ:

մակի մեջ էլ ենք դրել, որ փակագիրք մենք չենք կապում Յոհանի անվան հետ: Լավ չէ, երբ բանավեճ՝ վարողն իր տեսակետները վերագրում է հակառակը պնդողին:

Զարմանալին այն է, որ Պ. Մուրադյանը Յոհանի սարկավագությունը չհաստատած, նրան ճարտարապետի տիտղոս է շնորհում: Եթե իրոք ՅՈՒՆԿՈՒՆԸ լինելու և վանի տաճարի ճարտարապետը, նրան միայն շնորհաշատ անվանելը քիչ կլինելու, որովհետև նա, կառուցելով Ավանի եկեղեցին, հիմնադրած կլինե՞ր հայկական տաճարների մի նոր տիպ, որը հետագայում տարածվեց Հայաստանում և նրանից էլ դուրս և իր կատարելությունը հասավ Հռիփսիմեի վկայարանում: Զարմանալի է, որ Յոհանն իր կառուցած տաճարի պատին ներկայանում է երկու բառ ունեցող մի խղճուկ արձանագրությամբ, այն էլ սարկավագ տիտղոսով, որ քահանաների սպասավորի և բուրվառ զցողի պաշտոնն է ցույց տալիս:

Վիմական արձանագրությունների վերծանմանը այդպես մոտենալու հետևանքով է, որ Մուրադյանը «Լրաբերում» տպագրված իր վերոհիշյալ հոդվածում Օձունի տաճարի հարավային մուտքի ճակատի արձանագրության՝ Դ. Շախկյանի վերծանությունը սխալ հայտարարեց, իսկ մի քանի ամիս անց ընդունեց այն: Այդ մասին իր հոդվածում նա գրել է. «Սակայն Ս. Ավագյանի գրառմանը և Գ. Շախկյանի նորերս կատարած լուսանկարին ծանոթանալուց հետո համոզվեցինք...», որ Շախկյանի վերծանած բառավորը ճիշտ է⁴: Հնարավոր չէ՞ր, արդյոք, արձանագրությանը լավ ծանոթանալուց հետո միայն գրել նրա մասին: Դեռ լավ է, որ Մուրադյանը անվերապահորեն հավատում է Ս. Ավագյանին, այլապես Օձունի այդ կարևոր արձանագրության՝ Դ. Շախկյանի վերծանությունը պետք է մնար մերժված վիճակում:

Բոլոր պարագաներում գովելի է, երբ հոգվածագիրը հրապարակով խոստովանում է իր սխալը և ճիշտ ուղու վրա է կանգնում: Կարծում ենք, որ նա շուտով կհրաժարվի նաև Ավանի տաճարի արևելյան պատի մենավոր փակագրի սառկաագ վերծանությունից, որովհետև հեղինակն իր երկրորդ հոդվածում այն միտքն է հայտնել, որ Ավանի փակագիր կազմողը դիտավորյալ կերպով և՛ գրի միջնագիծը, որ հնում (մինչև VII դարը և որոշ փոփոխություններով՝ նաև մինչև X դար) պարտադիր էր, չի արել. որպեսզի նույն գիրը կարելի լինի կարդալ և՛ ա, և՛ ս: Նա գրում է. «Ուրեմն՝ Ավանի փակագրի հեղինակը խուսափել է Ա-ի մեջ սյունագիծ տանելուց մեկ պատճառով՝ այդ դեպքում գիրը կկարդացվեր միայն Ա, իսկ նրան անհրաժեշտ է եղել Ա-ի երկու ստեղծերով ալլ գիր ևս հուշել, որպիսին միայն Ա-ն է»⁵:

Նշանակում է, Մուրադյանը Ա-ի միջնագիծն, կամ ինչպես ինքն է անվանում, սյունագիծն մեծ կարևորություն է տալիս և այն համարում է որոշիչ հանգամանք՝ միայն և՛ կամ միատեղ և՛ և՛ կարդալու համար:

Կարող ենք հավատացնել նրան, որ այդ որոշիչ միջնագիծը տեղում կա (տե՛ս լուսանկարը), այն էլ՝ նրբին ու զեղեցիկ փորագրությամբ, որ կատարել է փակագրի փորագրողն իր ձեռքով: Հետևապես, բոլոր իր դրած պայմանի,

⁴ նույն տեղում:

⁵ նույն տեղում, էջ 235:

Մուրադյանը փակադրի մեջ միայն Ա է կարդալու, իսկ ա-ի հարցը մեջտեղից վերանում է, ուրեմն՝ վերանում է նաև սառկալագ բառը՝

Հետաքրքիր է, որ Մուրադյանը գիտե ա-ի միջնագծի գոյությունը, բայց չի ուզում այն վերադրել փակադրի կազմողին։ Այդ մասին իր վերոհիշյալ հոդվածում նա գրում է. «Միջնադարյան թե նորօրյա մի «վերժանող» ՅՈՒՆԵՍԿՈ-ի Ա-ն տեսնելուց հետո կոահել է, որ փակադրի Ա-ն առանց սյունագծի է և որո-



չել է «լրացնել» պակասը, բայց, բարեբախտաբար, անվարժ է եղել, ուստի սյունագիծը ժամանակից շուտ թեքել է ու միացրել աջ ստեղին»։ Նա իր այդ սխալ կարծիքը հիմնավորելու համար վկայակոչել է մեզ, գրելով, թե իբր մենք տեսել ենք այդ ստեղնը և կասկածել, որ դա ոչ ժամանակի հավելում է և հաշվի չենք առել ու մեր հրատարակության մեջ չենք մտցրել։ Այդ առթիվ նա գրում է. «Այս պարագան (այսինքն փակադրի Ա տառի միջնագծի հետդարյան հավելված լինելը — Կ. Ղ.) պրոֆ. Կ. Ղաֆադարյանը ժամանակին նկատել է, ուստի հրատարակել է առանց սյունագծի»։ Այդպես չէ։ Փակադրի Ա-ի միջնագիծը բացակայում է մեր 1945 թ. հրատարակության միջից ոչ թե այն պատճառով, որ մենք այդ գիծը հավելված ենք համարել, այլ՝ մոռացմամբ։

Այր-ի միջնագիծն իրականում գրերի որոշման մեջ ոչ մի կարևորություն չունի։ Նա վկայում է գրի հնության մասին և ուրիշ ոչինչ։ Վաղուց հայտնի է դարձել, որ սկզբում այդ միջնագիծը եղել է այր-ի աջակողմյան ստեղնը՝ զրսից

օ նույն տեղում։

բ նույն տեղում։

(V դար), հետո գրի սեղման հետեանքով դարձել է միջնագիծ (VI—VII դդ.), ավելի ուշ՝ փոքրացել է (X դար) և իսպառ վերացել (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 2): Եթե հետևելու լինենք Պ. Մուրադյանի տեսակետին, ստացվում է, որ X դարից հետո գրված բոլոր ալբ-երը, որոնք միջնագիծ չունեն, կարելի է կարդալ և՛ ալբ, և՛ սա:

Իր վերոհիշյալ հոդվածում Պ. Մուրադյանը տպագրել է նաև Ավանի փակագրի լուսանկարը (էջ 234), բայց, ցավոք, ոչ թե անաղարտ վիճակում, այլ՝ ուսուչի ենթարկված. լուսանկարի վրա ներկով սևացրած են գրերի գծերը, բայց ա գրի միջնագիծը (ներքին ստեղծը), որ տեղում գոյություն ունի, արտահայտություն չի գտել այնտեղ: Գիտության մեջ ուսուչի ենթարկված լուսանկարները վավերական չեն. երբ գրերի որոշ գծեր շեշտվում են և որոշ գրծեր էլ՝ չեղոքացվում, լուսանկարը համարվում է անվավեր:

Արդ, կարծում ենք, որ Պ. Մուրադյանը մեզ հետ համաձայն կլինի, որ դատը շահելու համար չի կարելի անաղարտ արձանագրությունը խաթարված համարել, այլապես դուրս է գալիս, որ մեր բանավեճը վերաբերում է ինչ-որ աղավաղված և ուշ ժամանակի հավելված ունեցող արձանագրության: Տեղին է հիշեցնել նրան իր իսկ բառերը՝ Եթե Մուրադյանը մեզ չի խնայում, թող գոնե խնայի Ավանի տաճարը:

Մեր քննադատն Ավանի փակագիրը ՅՈՒՆԵՍԿՕ-ն անվան հետ կապում է այն պատճառաբանությամբ, որ նրանք իրար մոտիկ են գրված: Նրա կարծիքով, եթե մի քիչ սովորականից հեռու են գրված, ապա այն պատճառով, որ երկու քարերի արանքի կարը խանդարել է ավելի մոտիկ գրելուն, այլապես գրի գծերը կրնան լինել երկու քարերի միացման գծի վրա:

Այստեղ էլ Պ. Մուրադյանը սխալվում է: Նա մոռացել է մի կարևոր հանգամանք, այն, որ այդ քարերն իրենց բուն տեղում չեն: Նրանք թափված են եղել և հողով ծածկված, ի հայտ են եկել տաճարի վերանորոգման ժամանակ և վերաշարվել այդտեղ՝ մոտավոր ճշտությամբ: Այդ երկու քարերն իրար մոտ են գրվել, որպեսզի արձանագրություններն աչքի ընկնեն⁸:

Հնում սովորաբար արձանագրությունները փորագրում էին առանց նկատի ունենալու քարերի իրար միանալու կարերը, քանի որ սրբատաշ քարերն այնքան լավ էին իրար կողքի շարվում, որ հաճախ աննկատելի էին մնում նրանց միացման գծերը, և արձանագրությունները քանդակում էին առանց քարի միացման գծերի վրայից թռչելու, ինչպես այդ տեսնում ենք հենց նույն Ավանի տաճարի արևմտյան պատի արձանագրությունների մեջ:

Ցույց տալու համար, որ առանց սկզբնաղբի էլ կարող է սարկալազ բառ լինել, մեր քննադատը մեջ է բերում մեր հրատարակած «Հաղբատ» աշխատության № 9 փակագիր արձանագրությունը, որի աջակողմյան տառասյունը նաևայսպես է կարդացվում, բայց ս գիրը չի նկատվում: Ինչ խոսք, որ օրինակն անհաջող է, որովհետև մեր խոսքը սարկալազ բառի սկզբի ս-ի մասին է, իսկ նաույսարթ բառը ս-ով չի սկսվում, այլ՝ լ-ով, որ Հաղբատի փակագրի մեջ

⁸ Այդ նույն պատից ընկած և հողի մեջ թաղված էին հայերեն և հունարեն երկլեզվյան ծածկագիր արձանագրության երեք քարերը, որոնք վերանորոգման ժամանակ վերաշարվեցին ախտ այն տեղում, որտեղ այժմ ՅՈՒՆԵՍԿՕ-ն և Կոնկ հիշատակագրություններն են, բայց հետո ծածկագիր արձանագրությունը, իրեն եղակի օրինակ, այդ շարքից հանվեց և տեղափոխվեց Հայաստանի պատմության պետական թանգարան՝ մշտապես այնտեղ պահպանելու նպատակով:

լավ է արտահայտված: Բացի այդ, Հաղբատի հիշյալ եռաստեղն փակագրի երկու կողմերի վրա էլ համառոտագրության պատվո նշան կա, որը փորագրողին իրավունք է տալիս բառերի միջից կրճատումներ կատարելու: Այդպիսի նշան չունի Ավանի փակագիրը: Անկախ այդ բոլորից, Հաղբատի փակագիրը մի տեսակ հավելված է նրա ձախ կողքին փորագրված բավական ընդարձակ արձանագրության, որի մեջ թվարկված են առնչեցի վարպետ Նաւայ-սարթի կատարած նորոգչական աշխատանքները 1651 թ., այսինքն՝ Ավանի փակագիրը գրելուց հաղար տարի հետո:

Զարմանալի է, որ Պ. Մուրադյանը ուշադրություն չի դարձրել, որ վարպետ Նավասարդն իր անունը գրելիս մեղանշել է ոչ միայն ուղղագրության, այլև բաղաձայնների լծորդության դեմ և իր իսկ անվան մեջ թույլ է տվել երկու սխալ. ձայնեղ Բ-ից հետո պարտավոր էր գրել դարձյալ ձայնեղ ղ, բայց գրել է հնչեղ խուլ ր գիրը: Ըստ երևույթին քար տաշելու և պատ շարելու մեջ նա վարպետ է եղել, իսկ գրելու ժամանակ առաջնորդվել է իր բարբառի օրենքներով և չի իմացել դասական լեզվի կանոնները (կարդալ-կարթալ վարդան-վարթան) և այլն: Անկասկած Նաւայսարթի ր-ն ևս իրենք արտասանել են:

Նշանակում է պետք է առաջնորդվենք իրական մնացորդներով և քերականական բնույթի հանելուկներով չզբաղվենք Բ-ին հաջորդող Գ-ին փոխարինող Կ-ի մասին, քանի որ մենք որոշ բարբառներում, օրինակ, կաւմիւր կովը արտասանում ենք զաւմիւր զով (Կ. Պուխ, Ն. Նախիջևան և այլն): Ուրեմն Մուրադյանն իզուր է մեղ հանելուկային հարց առաջարկում՝ ասելով. «... բայց հարգարժան պրոֆեսորը կարող է Ավանի արձանագրության ժամանակակից կամ գեթ մերձավոր դարերում որևէ օրինակ մատնացուցել, ուր միավանկ բառում Բ-ից հետո Գ > Կ հնչյունափոխություն է վկայվում»⁹:

Շատ դժվար է այդ հանելուկին պատասխանելը նախ այն պատճառով, որ V—VII դդ. թվով քիչ արձանագրություններ ունենք, բացի այդ, միավանկ բառերի թիվն առավել քիչ է, և երրորդ՝ այն պատճառով, որ զաւրկ փակագիրը եզակի օրինակ է: Մուրադյանը մոռացել է, որ և գրի բացակայության օրինակ որոնելիս իր բերած Նաւայսարթը առնվազն հաղար սարվա տարբերություն ունեն Ավանի փակագրից: Հետաքրքիրն այն է, որ այդ հանելուկն առաջարկելու ժամանակ մեր քննադատը դարձյալ հենվում է նույն Ս. Ավագյանի վրա, հայտարարելով, թե նա է այդ հնչյունափոխության օրենքներն ուսումնասիրել: Բայց Գաւրկ-ը մի՞թե միավանկ է: Նա, ինչպես հայտնի է, առաջ է եկել Գեորգ երկվանկ ըստից. ր-ն հնում ձայնավորի հատկանիշ է ունեցել, և Գաւրկ-ը կարող էր արտասանվել Գաւրկ, անգամ՝ Գաուրկ:

Պ. Մուրադյանն իր հոգվածում Գաւրկ վերծանությունը հերքելու նպատակով վկայակոչում է պրոֆ. Հ. Աճառյանին, ասելով, թե նա մեր «Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը» գրքույկին ծանոթ է եղել, բայց Գաւրկ-ն իբրև անձնանուն «Հայոց անձնանունների բառարանի» մեջ չի մըտցրել՝ «հավանաբար վերծանությունը անստույգ համարելու պատճառով»¹⁰:

Մուրադյանին հավանորեն ծանոթ է և այն փաստը, որ Աճառյանն իր բառարանի մեջ չի վերցրել ՅՈՒՆՆ անունը, որի անստուգության մասին խոսք

9 «Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 2, էջ 236:

10 նույն տեղում:

անդամ չի կարող լինել: Նրա բառարանում չկա նաև Ավանի տաճարի հյուսիսային պատին փորագրված Մաթնոս անունը, որ մեր նույն զրքում է հրատարակված: Դեռ ավելին. Աճառյանն իր բառարանի մեջ չի վերցրել իրեն քաջ հայտնի Վարդանի, Արիստղոմի և ուրիշների անունները, որոնք VII դարի բսկրգբին մասնակցել են Դվինի կաթողիկե եկեղեցու վերակառուցմանը և իրենց անունները փորագրել են տաճարի ծածկի կղմինդրների վրա՝ թրծելուց առաջ: Այդ արձանագրություններից ենք իմանում, որ VII դարի սկզբին հայկական գրերի մեջ գոյություն է ունեցել շղաղիւ գրի տեսակն այսօրվա գեղեցիկ ոճով¹¹:

Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանի» այդ «թերություններ» նշում ենք ոչ թե մեղադրելու համար առասպելական աշխատունակության տեր մեր սիրելի ուսուցչին, այլ որպեսզի ցույց տանք, որ նա իր բառարանի մեջ չէր վերցնում առանձին հիշատակագրված անձնանունները, որոնց նա կարևորություն չէր տալիս: Այլ բան է թե մենք (և մեր քննադատը) համաձայն ենք նրա հետ, թե ոչ:

Այնուհետև Պ. Մուրադյանը, հենվելով Ս. Ավագյանի մի հոդվածի վրա, մեր երբևէ վերծանած բազմաթիվ արձանագրությունների մեջ գտել է երկու փակագիր, որ սխալ ենք վերծանել 1948 թ. տպագրված զրքի մեջ: Տասնյակ հազարավոր փակագրերի մեջ երկու անհաջող վերծանություն, այն էլ՝ Ս. Ավագյանից փոխ առնված, որոնց մասին դեռևս 1968 թ. է գրվել... Սակայն տվյալ զեպքում կաբեռն այն է, որ Մուրադյանը զրանից ընդհանուր հետևություն է անում. «Կ. Ղաֆադարյանը փակագրերն ու կցագրությունները (ի՞նչ բան է կցագրությունը՝ չգիտենք—Կ. Ղ.) կարգալիս հաճախ տառերի հերթականությունն է հետևում»¹²:

Այո, գրերի հերթականությանը հետևելը պարտադիր պայման է. եթե այդ հերթականությանը չհետևենք, վիմագրերի վերծանության մեջ Սոդոմ-Գոմոր կառաջանա, և այնտեղ, ուր ս գիրը չկա, կարելի կլինի սաբկավագ կարգալ և այդ սարկավագին էլ ճառագայտ հռչակել: Փորձի պակասը և վիմական արձանագրությունների թերի իմացությունը միշտ էլ անխուսափելիորեն հանգեցնելու են մեծ և փոքր սխալների:

ЕЩЕ РАЗ ОБ ОДНОЙ НАДПИСИ АВАНСКОГО ХРАМА

Проф. К. Г. КАФАДАРЯН

(Резюме)

В статье посредством анализа лигатурной монограммы надписи на восточной стене Аванского храма показывается правильность ее расшифровки (ԳԱԽԴ), данной нами в 1945 г., и научная необоснованность мнения П. Мурадяна о том, что эту монограмму следует читать ՍԱՐԿԱԽԿԱԳ и что упомянутый в надписи Иоанн якобы был архитектором храма (см. «Историко-филологический журнал», 1974, № 2, стр. 233—238).

¹¹ Տե՛ս Կ ար և Ղ ա ֆ ա դ ա ղ յ ա ն, Հայկական գրի սկզբնական տեսակները, Երևան, 1939, էջ 88:

¹² «Գլատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, էջ 236: